ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» նոյեմբերի 2011թ. **N__ -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով 2011 թվականի հոկտեմբերի 4-ին «Ֆրանս Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության ու Երևան համայնքի միջև կնքված նվիրաբերության պայմանագիրը, նույն թվականի հոկտեմբերի 28-ին Անդրանիկ Խալոյանի և Երևան համայնքի միջև կնքված, նոտարական կարգով վավերացված ու սեղանամատյանում գրանցված հ. 7310 անշարժ գույքի նվիրատվության նախնական պայմանագիրը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կաթողիկոսարանի դիվանապետի 2011 թվականի մայիսի 23-ի թիվ 872 գրությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ, 597-րդ և 605-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Որպես նվիրատվություն ընդունել՝

1.1. Անդրանիկ Խալոյանի կողմից Երևան քաղաքի Երկրորդ Եկմալյան փողոց հ.5 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքի 2-րդ հարկի 52.0 քմ մակերեսով երկու սենյականոց բնակարանը:

1.2. «Հայ և Արաբ ժողովրդների երախտիքի ու բարեկամության» հուշարձանը:

2. «Ֆրանս Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությունից որպես նվիրաբերություն ընդունել ֆրանսիացի քանդակագործ Օգյուստ Ռոդենի հեղինակած Ժյուլ Բաստիեն Լեպաժի բրոնզյա արձանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2011 թվականի հոկտեմբերի 4-ին «Ֆրանս Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության և Երևան համայնքի միջև կնքված նվիրաբերության պայմանագրի համաձայն՝ «Ֆրանս Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերության սեփականությունը հանդիսացող արձանն անհատույց սեփականության իրավունքով տրամադրվել է Երևան համայնքին, իսկ հոկտեմբերի 28-ին Անդրանիկ Խալոյանի և Երևան համայնքի միջև կնքված նոտարական կարգով վավերացված և սեղանամատյանում գրանցված հ.7310 անշարժ գույքի նվիրատվության նախնական պայմանագրի համաձայն՝ Երևան քաղաքի Երկրորդ Եկմալյան փողոց թիվ 5 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքի 2-րդ հարկի 52.0 քմ մակերեսով երկու սենյականոց բնակարանը Անդրանիկ Խալոյանի կողմից նվիրվել է Երևանի քաղաքային համայնքին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կաթողիկոսարանի դիվանապետի 2011 թվականի մայիսի 23-ի թիվ 872 գրությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կաթողիկոսարանի կողմից Երևան համայնքին է նվիրվել «Հայ և Արաբ ժողովրդների երախտիքի ու բարեկամության» հուշարձանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 597-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այդ դեպքում նվիրատվության պայմանագիրը համարվում է լուծված: Ուստի անհրաժեշտություն է առաջացել կայացնել որոշում՝ նվերներն ընդունելու մասին:

Ելնելով վերոգրյալից Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գույք ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գույք ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ